

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Քիֆլիս, սեպտեմբերի 2

Ինչ որ նոր է, մեր հասարակութեանը սիրելի է, ցանկալի է, իսկ յետոյ հասարակութիւնը զգուժ է, անտարբեր է դառնում:

Ամեն մի բան, մի ձեռնարկութիւն, մի բարեգործութիւն, երբ առաջին անգամ երևան է զայն մեր հասարակութեան մէջ, ամենքը նորան սիրով են ընդունում, աշխատում են մասնակցել, իրանց կարողութեան չափ օգնել գործին, բայց երբ անցաւ փոքր ինչ ժամանակ, ամենքը սկսում են պէս գործը դադարեցնել են նոյն իսկ այն միջոցին, երբ հարկաւոր է ամեն ջանքերը և աշխատութիւնները բազմապատկել, կամ գոնէ շարունակել առ ժամանակ, որպէս զի գործը հասնի իր ցանկալի վախճանին, և ունայն շանցնեն ձեռնարկած միջոցները:

Երբ Վշակ լրագիրը առաջին անգամ յայտնեց Հայաստանի անտանկի սովի լուրը, և կարգաց հրապարակ արտով հրաւիրեց յոգուտ սովաստաններին, զանազան կողմերից կայծակի արագութեամբ երևեցան օգնութիւններ, զանազան կողմերից անձերի նման թափվեցան նուէրներ զխնայարարական մասնաժողովը բաժանում էր այդ նուէրները բոլոր սովակներին առանց խտրութիւն դնելու կրօնի և ազգութեան մէջ, և ստանալով բարձրացրեց Հայութեան անունը և պատիւը թէ Եւրոպայի, թէ Քիւրքիայի և թէ նոյն իսկ Հայի արիւնդարու քուրդ թնամիւնների առաջ:

Ամեն մի դատակարգին պատկանող անձինք սկսեցին նուէրներ հաւաքել: Այս միջոցին Ռուսաստանի Հայերը ցոյց տուին մի օրինակելի մարդասիրութիւն որը երբէք չը պէտք է մոռանան Հայաստանի Հայերը: Այս մարդասիրական գործին մասնակցեցին զանազան կրօնի և ազգութեան անձինք — քրիստոնեան, մաշնտականը և մոլոխականները:

Երբ Հայաստանում սովը յայտնվեց և դեռ ոչ մի կողմից օգնութիւն չէր հասնել, Հայաստանի Հայը բոլորովին յուսահատվեց, նա գիտէր լաւ, որ ոչինչ օգնութիւն չէր կարող ստանալ իր տէրութիւնից, նրա յօրը մնացել էր միայն մէկի վերա, նա իր կենաց և մահու հարցը նորանից կախուած էր երևակայում. նա իր փրկութիւնը և անդուծող խորքերում գործելը նորանից էր սպասում.— դա Խմբաժինն էր, դա Հայոց ընդհանուր մար Աթոռն էր: Բայց այս բանի մէջ Խմբաժնի գործունէութիւնը ամենքին յայտնի է:— Արեւմտեւորայ բոլորովին մտածեց Հայաստանից Հայը, որովհետեւ նրան շատ սարսափեցրեց Խմբաժնի անտարբերութիւնը: Հայաստանից Հայը, դեռ մինչև այն ժամանակ չը գիտէր, թէ ունի մի երևելի և զօրեղ պաշտպան, որը պիտի ազատէր նորան աշուկի սովի ճանկերից.— դա Ռուս-Հայաստանի Հայութիւնն էր:

Երբ Հայաստանից դուրս բնակվող Հայերի օգնութիւնը հասաւ, Հայաստանից Հայը զգաց որ անտէր չէ. նա յանկարծ քաջարկվեց, նա իր տուն մտնելու երբ ընտանիքը տխրած և սոված էր տեսնում, քաջարկում էր և Հայաստանի համար արտասանում էր հետեւեալ խօսքերը, թէ «Երեւոյ կը տխրէք, սիրելիներս, մենք մեր կարծածին չափ անտէր չենք, մեր ազգակիցները, որոնք բնակվում են ուրիշ տէրութեանց մէջ, մեզի չեն մոռացել, ներանք մեզի օգնութիւն կուղարկեն. դուք նոցա Համար աղօթեցէք: Այսպիսի խօսքերով պաշտում էր նա իր ընտանիքը, մինչև նորան նիւթական օգնութիւն էր հասնում: Նորա տխուր դէմքի վրա փայլում էր մի ծաղիկ, նա իր անձը դո՛ւ մատուցանելու պատրաստ էր նոցա կենաց համար, որոնք ներան օգնում էին, և իրանց նուէրները չէին խնայում նորա փրկութեան համար:

Այս միջոցին, տարաբաղդաբար, երբ պէտք է գործին վերջը պահակ լինպէս ասում են, նուիրատուութիւնները սակաւացան և համարեա վերջացան: Մի քանի ամիս առաջ, որ Վշակի բոլոր թերթերը լցված էին նուիրատուաց ցուցակներով, այժմ հազու է պատահում, շատերի մէջ գոնէ մի ցուցակ: Այսպիսի ժամանակ, երբ Հայաստանից Հայը ճանաչել է իր Հայրենակից, հեռուոր տեղերում ցրված Հայերին, երբ նա արտով և հոգով միանում է մեզ Հետ, մեզ պէտք էր դարձեալ շարունակել մեր օգնութիւնը դէպի նա, որը դեռ ևս շատ կարօտութիւններ ունի: Այս միջոցին, երբ շինութեան հիմքը ձգել են և պատերը կանգնեցնել, պէտք է աշխատել և առատապէր ծածկել:

Եթէ կամենում ենք, որ շինութիւնը աւարտենք, և կիսատ թողնելով, ծաղրալի չը դառնանք:

Վստնոս

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Քիֆլիս, 8 սեպտեմբ:

Անցեալ տարի Գանձակայ լեռների վրա ճանապարհորդելու ժամանակ, ինձ պատահեց Սլաւիանայի դուխարոր ռուսների մօտ տեսնել ոչխարների մէրինոս կոչված տեսակից: Որովհետեւ ոչխարների այդ ցեղը յայտնի է իր բրդի աղնութեամբ — շատ օգտակար կը լինէր դրանց Վանայ կողմերում աճեցնելը.— այդ նպատակով ստորադրութիւն բաց արի, որ մի մասնաւոր գումար հաւաքվի, այդ ոչխարներից գնելու և Վան ուղարկելու համար: Սլաւիանայի և Գեղարքի Հայ վաճառականները, Չարգախուր գիւղի բնակիչները սիրով ընդունեցին իմ առաջարկութիւնը և նրանց նուէրներով հնովեցաւ յիս ու չէ հատ ոչխար: Սովի պատճառով հնար չեղաւ այդ փոքրիկ հոտը Վան ուղարկել, և ոչխարները մնացին զանազան անձանց մօտ:

Ես իմ անձնական գործերի պատճառով տոխված լինելով առժամանակ հեռանալ Գանձակից խնդրեցի պ. Աղէքսանդր Խօջանանին, որը ընդունեց Գեղարքի և Սլաւիանայի ոչխարները, հաւաքել և յանձնել պ. Յովհաննէս Մանասեանին: Այս վերջին պարոնը, իր ստացածը Չարգախուր ոչխարների հետ միացնելով, պիտի պահէ իր մօտ մինչև առանձին տնօրինութիւն լինի իմ կողմից:

Պ. Յ. Մանասեանը ոչխարներից ստացած արդիւնքը պէտք է ծախսէ նրանց պահպանութեան համար, իսկ գանձերը ծնողների հետ կը մնան որպէս Վանի սեպակաւնութիւն:

Նուիրատուների ստորագրութեան ցուցակը յանձնել եմ պ. Աղէքսանդր Խօջանանին:

Ա. Քոխմախան

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Քիֆլիս, 8 սեպտեմբերի

Կարգալով Վեդուի 67 և 68 համարներում տպված «Բարոյիչներ» վերնագրով կատակերգութիւնը, զարմացանք դիւղացու այդ չեղինակութեան վրա, զարմանալի բան, որ մէկ կողմից չեղինակը սովորացնում է իրան նմաններին, որպէս թէ պրօտէստանտ առված Հայ աւետարանականները ազգատեսաց են, միւս կողմանէ ակնարկում է միսիոնարներին որպէս թէ դրան էլ դորանց առաջնորդներ են դէպի ազգատեսցութիւնը. բայց մի և նոյն ժամանակ խնդրեց սաստիկ կուրսնում է, չէ կարողանում իրաւ տեսնել որ ինքն էլ այդ ազգատեսացներից մէկն է իրան անտոյզ չեղինակութեան արդիւնքովը, թէ ինչու համար աշս պատմում:

Մենք Հայ աւետարանականներս Հայրիւր անգամ խոստովանել ենք, երկու Հայրիւր անգամ էլ կրկնել ենք «Վշակի» համարներում, թէ մենք Հայ ենք և Հայերի Հարազատ ժառանգներ: Թէ կուղ որքան էլ ատէ մեզ մեր ազգը, մենք դարձեալ Հայ ենք և այսպէս էլ պիտի կենանք մինչև վերջը, բայց առանց զոհելու և ոչ մի նշանակեց մեր կըրօնական համոզմունքից որը հինոված է Աստուծոյ խօսքի ս. աւետարանի վրա:

Սակայն դարձեալ Վեդուի համախոհները առնառթար մեզ նոր ազգ են կարծում, որ այդ խօսքը որչափ որ զոյուկի է բուն իսկ Վեդուի թերթերը կարգացողներին:

Եթէ մենք, Հայ աւետարանականներս, մեզ առնանք գերմանացի, անգլիացի կամ ֆրանցի, այն ժամանակ Վեդուի կը սկսէր կեղծ ազգասէր ձևանալ և երկար ու բարակ ճառեր գրել մեզ վրա, և մեզ խրատել որ մեզ Հայ կոչենք: Իսկ հիմա, երբ որ մենք պարզապէս խոստովանում ենք մեր ընդհանուր ազգի առաջին անկեղծութեամբ մեր ազգը սիրելը և բոլոր ճշտութեամբ մեր լեզուն պաշտպանելը, այդ ժամանակ Վեդուի իրան համախոհներով բոլորովին խուլ է ձևանում, ուղում է ստիպել որ մենք մեզ ուրիշ բան անուանենք: Սորանից յետոյ ամեն մի ողջամտէ Հայ, որ Հայոց ազգի ապագան աչքի առաջ ունի և լրջմտութեամբ խորհում է և գործում ներպատակաւարար, իրաւունք ունէ այդպիսի նուաստ միջոցներ ձեռք առնողներին համարել ազգութեան

ամբողջութեանը վնասակար, չը նայելով նոցա մեզ ամբաստանելուն:

Մի խօսք ևս. Ս—եանցները կարծում են թէ ձեռք աւելի մեծ նշանակութիւն կունենայ աւետարանականների վրա քան Լեոն Ժ. պապի և Կղեմէս Լ. և Կարոս Ե. կայսրի հարուածները, որոնք պատճառ եղան ամբողջ Գերմանիայի բարեկարգութեանը, առաջադիմութեանը և լուսատւութեանը:

Իսկ այսօր մենք Կովկասի մէջի աւետարանական Հայերս չը պէտքէ դադարենք մատուցանելուց մեր խորին հնորհակալութիւնը մեր հօր Կայսրին և աղօթք առ Աստուած նորա համար, որի հովանաւորութեան տակ վայելում ենք մեր խղճմանքի ազատութիւնը: Արեւմտեւոր Վեդուի «Վեդուի» մնար, նա որչափ կը հալածէր մեզ:

Հայ աւետարանական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անպտեմբեր ամսից սկսած Ռուսաստանի բոլոր հեռագիրների համար վարձ կը վերցվի ոչ թէ քսան բառից, այլ խաբարանչիւր բառից մի յայտնի վճար:

Մեզ հաղորդում են. Քիֆլիսի ՀԱԼԱԿԱՐ կոչված թաղում յաճախ գողութիւններ են պատահում ոչ միայն դէշերով, այլ և ցերեկով: Գանի օր առաջ կէս օրվայ ժամանակ կողոպտեցին պ. Մ. Սարումանի տունը. թէ և գողերը բռնված են, բայց կողոպտված իրեղէնները դեռ չեն գտնվել:

ԱԽԱՑԻԱՑԻՑ եկողները պատմում են, որ այնտեղ բաւական ձիւն է եկել, ցրտի սաստկութիւնից գտել են մի գիւղացի ճանապարհին սառած:

Մեզ գրում են ԱՍՏՐԱԿԱՆԻՑ, որ այս տարի այնտեղի օրորդաց գիմնագիւմ աւարտողների թիւում շատերը կային, որոնք ուղեցան Ս. Պետրբուրգ և Մոսկվա գնալ բարձրագոյն ուսման նուիրվելու նպատակով, բայց բոլոր օրորդների ծնողները այդ դիտաւորութեան ընդդիմացան: Միայնակ բացառութիւն կազմեց տիկին Մարիամ Զ. Կատելնիկովան, որ իր աղջկան վճեց ուղարկել Ս. Պետրբուրգ բժշկական ուսումնարան: Տիկինը սրտաշարժ խօսքերով դիմեց իր աղջկան, ինչեցնելով նրան իր ընտրած ընթացքի բարձր նպատակը և այն օգուտը, որ օրորդից պիտի սպասի ազգը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ \*)

Պ. ԿԼԱՍՏԹՈՆ խօսք առնելով ըսաւ թէ Պ. Աշմէտ—Պարթէթի բանաստեղծութիւնը մանրամասն պատասխանի պէտք չունի Սակայն, նորա ձեռած նիւթերուն ծանրութիւնը նկատելով, հարկ կը համարենք քանի մը կէտերու վրայ պատասխանել, ցուցնելու համար թէ այդ պատարժան երեսփոխանին հնչելն խօսքերն ընդհանրապէս որչափ արժէք ունին:

Պ. Աշմէտ—Պարթէթի գլխաւոր խօսքն այս է որ, եթէ Քուրքիա բարենորոգում չի գործդնել կը դժկամակի, պատճառը մեր բարի արամադրութեանց ապացոյցը չունենալն է:

Պ. Աշմէտ—Պարթէթ ինչո՞ւ չը լինէր 1855 թուականն, երբ Քուրքիա Անգլիոյ և Գաղղիոյ բարի արամադրութեանց ստղոյ ապացոյցներն ունէր 150 միլիոն ոսկւոյ ծախուց և քանի թանկագին կենաց կորստեան առթիւ: Բայց, արեւմտեան տէրութեանց բարի արամադրութեանց այսպիսի մեծամեծ ապացոյց կեցած ժամանակ, Պ. Աշմէտ—Պարթէթ կրնայ իմացնել թէ ո՞չք էին գործադրուած բարենորոգումները:

Պ. ԱՇՄԵՏ—ՊԱՐԹԵՍ.—Ի՞նչ ձեռնարկներ եղան յայնժամ ստիպելու համար զՔ. Գուռն, որ բարենորոգումներ գործադրէ:

Պ. ԿԼԱՍՏԹՈՆ.—Անդադար ձեռնարկներ և մինչև իսկ կծու յանդիմանութիւններ արդիւնք չունենալով, ծիծաղելի եղան Պ. Աշ-

\*) Շարունակութիւն:

մէթ Պարթէթի տեղեկութեանց շրջանակ զարմանալի կերպիւ ընդարձակ է: (Մի ծաղիկ եր) Թէ Եւրոպիոյ և թէ Ասիոյ վրա կը տարածի, և ամեն երևակայելի նիւթերու վրա ամեն քաղաքագէտի և ռազմագէտի զաղախարներն ու եզրակացութիւնները կը պարունակէ: (Մի ծաղիկ եր) Եւրթուրին մէջ ձեն կրնար իրեն հետեւիլ Կէտ մը միայն պիտի յիշեմ, որոյ վրա քիչ մը տեղեկութիւն ունիմք: Այս է Պարթուսի վիճակն: Այս մասին կը համարձակուի Պ. Աշմէտ—Պարթէթի հետ ուղղակի անհամայնութեան մէջ լինելը, և ըսել թէ իւր գերնախի հեղինակութիւնը արտափելի կերպիւ խորեր են պիտի (Մի ծաղիկ եր) Ռուսք իւր կարծած բաներէն ոչ մին ըրած են. և եթէ Պ. Աշմէտ—Պարթէթի Պարթուսի նկատմամբ ունեցած տեղեկութիւնն իրրեւ օրինակ մը նկատուի միւս նիւթոց նկատմամբ անոր ընդարձակ և անփնտել տեղեկութեանց, կը յանձնարարեմ իրեն որ լաւ չը ստուգած խորհրդարանին չը հաղորդէ զանոնք: (Մի ծաղիկ եր, մի ծաղիկ եր):

Պ. Աշմէտ—Պարթէթի բանաստեղծութիւնը ժողովոյս առջև գտնուող (Պ. Պրոյս) սի առաջարկութեան հետ յարաբերութիւն չունի. բայց այնքան ծանր ամբաստանութիւններ կը պարունակէ, որ անկարելի է լուծեամբ անցնիլ: Կրէ թէ Անգլ. կառավարութեան կողմանէ անիրաւ կը լինի Պերլինի գաշնադրին Քուրքիոյ աննպատեղող պայմանաց գործադրութեան ետեւէն ինչպէս, երբ ուրիշ նպատաւոր պայմանաց գործադրութեան հոգ չը տարուիր Արդ, Պերլինի գաշնադրին մէջ Քուրքիոյ նպատաւոր յոյուած մը չեմք գիտեր, որ առանց գործադրութեան փնայած լինիլ Եթէ Գուռն իւր շահուց նպատաւոր յոյուած մը ցուցնէ, որ ուրիշ տէրութեան մը յանձն ընդգրկմութեամբ անործադրելի եղած է, մեք անմիջապէս բարեկամական միջնորդութիւն կ'ընեմք կարգադրելու համար: Բայց Գուռն այդպիսի ձեռնարկ մը չըրաւ, և Պ. Աշմէտ—Պարթէթի ամբաստանութիւնը բնաւ հիմ չունիլն Ձմեղ պատասխանատու կը բռնէ Պալքաններն Օսմանեան զօրք զուրկուած չը լինելուն համար: Բան մ'ըրի՞նք զօրք զրկուելուն առաջին անգամ համար Պաշտօնի անցնելի ի վեր բռն մ'անգամ չըրինք այդ նշանակութեամբ: Պ. Աշմէտ—Պարթէթ կը կարծէ թէ Սոլթմանը Պալքանաց գրաւումը մեծ առաջանշորհում մը կը նկատէ, ապահով է որ Սոլթմանն յոյժ կը փախաքի Պալքանները գրաւել տալու: (Մի ծաղիկ եր, մի ծաղիկ եր): Ի՞նչ է բոլոր այս ունայն ամբաստանութեանց նշանակութիւնը:

Պ. Աշմէտ—Պարթէթ Ռուսք—Քուրքիական վերջին պատերազմին պատասխանատուութիւնն իմ վրա կը թողու: Աստ չափազանց զէշ յանդիմանութիւն մը կը ցուցնէ: Սոլթմէն էի այդ իրողութեանց ժամանակ.—Անշտան մասնաւոր անհատ մը, (ոչ, ոչ ի աղաղակներ) որ պաշտօնական դիրք մը չունէր: Նրկրին կառավարութիւնն իրենց ձեռք գտնուող անձինք կառավարական աշխարհավարութեան պատասխանատուութիւնները զին կրնար մասնաւոր անհատից վրա նետել, որը երկրին գորութիւններն իրենց արամադրութեան ներքեւ չունին: Սոլթմէն տէրութեան մ'իշխանութիւնն իրենց ձեռք ունեցող անձինք դժգոհ են այն արդիւնքէն, զոր ոչ թէ իրենց աշխարհավարութիւնն, այլ պաշտօնի վրա չը գտնուողներուն անպաշտօն գործողութիւնն արտադրել է, և եթէ այսպէս տէրութեան սանձը բռնելու անկարող կը տեսնեն իրենք զիրենք, պէտք է հրաժարիլ և գործն յանձնեն անոնց, որք այսպէս առաջնութիւն

